Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 24-ի գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 16-ի N35 –N37-Ա, 2023 թվականի հունվարի 17-ի N38-Ա –N46-Ա, 2023 թվականի հունվարի 18-ի N47-Ա, 2023 թվականի հունվարի 19-ի N48-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1.N35-Ա որոշման նկարագրական մասում օրենքների վերնագրերը սխալ են գրառված։

2.N37-Ա որոշման մեջ անհրաժեշտ է նշել ՀՀ ՇՄ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մասնավորապես որ աշխատակիցների նվազագույն արձակուրդների նախնական գրաֆիկն է սահմանվել։

3.N38-Ա, N39-Ա, N40-Ա, N41-Ա, N42-Ա, N43-Ա, N44-Ա որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի և 21-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին։

4.N38-Ա, N40-Ա N41-Ա որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի և 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին։

5. N35-Ա- N48-Ա որոշումներում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սամանված վավերապայմանները թերի են գրառված։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ